Ավետիք Իսահակյան

Էս քարփի տակ խորունկ փորեմ

Էս քարփի տակ խորունկ փորեմ,
Թաղեմ սիրտս ցավով լի.
Մեծ քարափն էլ վերան շրջեմ,-
Թաղեմ սիրտս սիրով լի …

Ա՜խ, շա՜տ վաղուց սիրտս առա,
Ընկա մարդկանց դուռն – երթիկ.
Ցավիս դեղ – չար շա՜տ խնդրվա,
Մարդիկ փակին դուռն – երթիկ:

Է՜հ, ի՞նչ անեմ, սիրտն ի՞նչ պետք է,
Ասի՝ թաղեմ, թող մեռնի.
Չէ՞ որ մարդիկ է՛լ սիրտ չունին,
Անսիրտ մարդը ցավ չունի:

Էս քարփի տակ խորունկ փորեմ,
Թաղեմ սիրտս ցավով լի.
Մեծ քարափն էլ վերան շրջեմ, -
Ծանր լինի, դուրս չելնի …

1897
Ալեքսանդրապոլ